ՍԱՍՈՒՆ, ԿԱՐՈՏ ԵՄ ՔՋԻ

Այսօր պատմական Հայաստանի մեծագոյն մասը՝ Արեւմտյան Հայաստանը, գտնվում է Թուրքիայի տարածքում: Սակայն ոչ վաղ անցյալում, մինչեւ 1915 թ. Մեծ եղեռնը, Արեւմտյան Հայաստանը բնակեցված էր հայերով: Այլ է, սակայն, պատկերն այսօր: Առաջին աշխարհամարտը համարելով լավագույն առիթ, թուրքական իշխանություններն իրագործեցին դարերով ծրագրված Հայոց Ցեղասպանությունը՝ այն ուղեկցելով արյունալի սպանություններով, բռնի տեղահանություններով եւ բնակավայրերի ամայացմամբ:

Թեեւ թուրքերին հաջողվեց հայաթափել Արեւմտյան Հայաստանը, սակայն նրանք չկարողացան հասնել իրենց նպատակին՝ վերջնականապես ոչնչացնել եւ բնաջնջել հայ ժողովրդին: Արեւմտյան Հայաստանից մազապուրծ եղած հայերն ապաստան գտան այլեւայլ երկրներում եւ օտար ափերում՝ մշտապես կարոտ սրտով սպասելով կրկին իրենց հայրական օջախները վերադառնալուն: Թուրքական յաթաղանից փրկվածներից ոմանք երկար դեգերումներից հետո ի վերջո կարողացան իրենց սրտի կարոտը մեղմել՝ բնակություն հաստատելով պատմական հայրենիքի մի փոքր մասում՝ Սովետական Հայաստանում:

Այսօր դեռեւս չի վերականգնվել պատմական արդարությունը, դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց Ցեղասպանության անժխտելի իրողությունը, դեռ Հայաստանին չի վերադարձվել իր պատմական հայրենիքի տարածքները: Ուստի չափազանց կարեւոր է, որ 1915 թ. թուրքական կոտորածներից փրկված հայորդիների հիշողությունները՝ կապված հայրենի երկրի եւ բնակավայրերի հետ, ներկայացվեն հանրությանը՝ այս կերպ փորձելով ցույց տալ, որ 1915 թ. դեպքերը ոչ այլ ինչ էին, եթե ոչ մանրամասն մշակված ու ծրագրավորած ցեղասպանություն:

Այս ամենի գիտակցումով է, որ մենք հրապարակում ենք այդ կոտորածներից փրկված փոքրաթիվ այն հայորդիներից մեկի ապրումներն այդ սոսկալի օրերի մասին: Հիշողությունը կապված է Արեւմտյան Հայաստանի ռազմական ոգի հանդիսացող Սասունի հետ: Գաղթականը, որի վերհուշը[1] ներկայացնում ենք, եղել է Սասունի Հազո-Խաբլջոզ[2] գավառակի Հով[3] գյուղի բնակիչ:

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

---

1 Վերհուշը Զաչան Պողոսյանը պատմել է իր թոռանը՝ Հարություն Պողոսյանին, որն այն գրի է առել:

2 Հազո-Խաբլջոզ (Խաբլջոզ, Գաբլճոզ, Գաբլջոզ, Հազզո, Հազո, Հազոյի կազա, Հազրո, Հազու, Հազրու, Ղաբլջոզ) գավառակ Արեւմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Սղերդի, երբեմն նաեւ այլ բաժանմամբ Մուշի գավառում: Արեւելքից սահմանակից է Մոկսանին եւ Խութին, հարավում՝ Խարզանին, արեւմուտքում՝ Խիանքին, հյուսիսում՝ Փսանքին: Վ. Քինեի տվյալներով 1891 թ. ունեցել է 48 հայկական գյուղ, շուրջ 5000 բնակչությամբ: Գավառակի կենտրոնը եղել են Հազոն եւ Խաբլջոզը, տե՛ս, **Գ. Կիրակոսյան,** Սասուն, Երեւան, 2010, էջ 161, 179, ՀՍՀ, հատ. 10, էջ 201, **Կ. Թաոոյան,** Ժողովրդական շարժումները Սասունում 1890-1894, Երեւան, 1966, էջ 33, **Ա-Դ-Օ,** Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երեւան, 1912, էջ 157, **Թ. Հակոբյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3 Երեւան, 1986, էջ 302:

3 Գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սղերդի գավառի Հազո-Խաբլջոզ գավառակում: 1909 թ. ունեցել է 15 հայ ընտանիք (որոշ տվյալներով՝ 8 ընտանիք): Գյուղի բնակիչները զբաղվել են անասնապահությամբ, երկրագործությամբ: 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ բռնությամբ տեղահանվել են: Բնակիչների մի մասը գաղթի ճանապարհին սպանվել է, մի մասն էլ անցել այլ երկրներ եւ բնակություն հաստատել օտար ափերում, տե՛ս ՀՍՀ, հատ. 10, էջ 550, **Թ. Հակոբյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1986, էջ 440:

ԼԱՌ՛, ԴՈՒ ՀՈ ԹՈՒՐՔ ՁԵՍ

Քայլում էր ծերունին ճոճվելով, մերթընդմերթ հենվելով իր ցուպին, քայլում էր մեջքը կորացրած, ասես երկու դարերի ծանրությունն էր տանում իր հետ դեպի հավերժություն, երկու դարերի, որոնցից մեկի վերջը եւ մյուսի սկիզբն իրենց անջնջելի մահասարսուռ կնիքը դրին մի հինավուրց, իր հնությունից էլ հալածված ազգի ճակատագրի վրա: Քայլում էր ծերունին, գլուխը կախ, քանդելով հուշերի կծիկը եւ ինչքան քանդում էր, այնքան էլ մռայլվում կամ պայծառանում էր ծերունական կնճիռներով պատած դեմքը: Նայում եմ այդ դեմքին, Աստված իմ, միթե՞ ծերունին, որն իմ պապն էր, երբեւէ ծիծաղել է անհոգ, գուցե եղել են այդպիսի պահեր, որ աշխարհը գազաններով է լցվել, գայլը եղնիկին քույրիկ է կանչել, երբ մերձեցել են նույնիսկ հավքն ու սողունը, բայց եղել է նաեւ, բայց ի՞նչ է եղել, ինչպես կասեր Վ. Հյուգոն «այստեղով թուրքն է անցել»:

Օգոստոսի շոգը համայն շնչավորներին քշել էր տների եւ ծառերի ստվերների տակ: Ասֆալտն այրում էր անապատային հեղձուցիչ տոթով, մեր բակում՝ թթենու հովի տակ, հավաքվել էին թաղի ծերունիները եւ համրիչի հատիկները մեղմորեն եւ միալար շխկացնում էին՝ քրքրելով անցյալի դառը հուշերի դեռ մխացող մոխիրը: Ինչ-որ ներքին պայմանավորվածությամբ լռություն էր տիրում, միայն համրիչի հատիկների ձայնն էր նրանց ստեպ-ստեպ վերադարձնում ներկային: Նման պատկեր ես տեսնում էի ոչ առաջին անգամ, եւ դեմքեր՝ յուրաքանչյուրը մի ընթերցված պատմության էջ, որ կողք կողքի դնելիս կարելի է կարդալ մի տանջված ազգի մռայլ անցյալը, որոնց ամեն մի կնճիռի տակ թաքնված է կորուստի թախիծը:

Մեր թթենին ինձանից մեծ էր հինգ տարով, այն տնկել էր պապս՝ տարիների դեգերումից հետո: Յուրաքանչյուր զբոսաշրջիկի համար այդ դեգերումները կհամարվեր հեքիաթային շրջագայություն, իսկ մահվան ճիրաններից դուրս պրծած հայի համար ի՞նչ է այդ:

Պապս ծնվել է Արեւմտյան Հայաստանում, Սասունի Հազո-Խաբլջոզ գավառակի Հով գյուղում՝ 1896 թվականին՝ համիդյան արյունահեղությունների տարիներին: Ունեցել է այն ժամանակվա հայերին բնորոշ բազմանդամ ընտանիք՝ նահապետական դերդաստան: Պապիս հայրը մեկնել էր

Սասունը 1914 թ. դրությամբ
Հեղինակ՝ Գեղամ Բաղալյան
Մասշտաբ՝ 1 : 160 000
Խաբլջոզ
Հազզո
(Հզու)
Մալաֆան
Սբ Կոնոնոս
Բամատուն
Տանձի(կ)
Սլոխ
Մարսոր
Խարվեր
(Խարվիներ)
Ներքիրաղ
Նորգեղ
Վերին Թառաշ
Միջին Թառաշ
Ներքին Թառաշ
Գելեհասան(ան)
Պելավ (Բիլավ)
Դամմոխ
(Տմոխ)
Բսիրա
Ռաբա(թ)
Բախրոնաս
Սմայլլկա(ն)
Դերա
Վերին Բաշտորամ
Ներքին Բաշտորամ
Զենախեր
Մզրեխալը
Դարագուզի
Մանկիկ
Ներքին Հարզամո
Վերին Հարզամո
Մաներա(ն)
Ներքին Մաներա(ն)
Մշրիդա(ն)
Դերոջ
(Տելեմոճ)
Պալ (Բալ)
Խարբախ
(Հարբախնի)
Կոր
Փափորդ(ա)
Տուվարիկը
Ասսի
(Ասսու)
Արծվի
Գելբի
Ծման
(Ծման)
Մերգի
Նորշեն
Նավալ
(Նավալն)
Փլոյար
Ամարո
(Ամերիկ)
Բղմա
Մարիսի
Մարգան
(Մարկա)
Գրբնկալ
Թոմրկան
Սրջան
Փերսան
Վերին Բարզա
Ներքին Բարզա
Ղաղեր
(Խաղեր)
Դամրկան
(Գոմեր)
Զնգովիկ
Ոսկանիան
Գոմեր
Գավրիկ
Դարիկ
Կանիրեր
Ռոնտնի
Ոստան
Սարեպա)
Արխունի
(Հրեան)
Մամրկա(ն)
Ոստանիկ
(Ներգիա)
Ոստան
(Հրեան)
Ոստան
(Հոիկ)
Ոստանք
Ոստանք
Ոստանք

Սուրիա՝ փող աշխատելու, եւ 18-ամյակը դեռ չբոլորած պատանին պետք է մտածեր մեծ գերդաստանի մասին, երբ արդեն բռնկվել էր 1915 թվականի հայկական ցեղասպանությունը, որի մահաբեր շունչը հասել էր անպարտ Սասուն: Ինչպես նախորդ դոյամարտերի ժամանակ, այս անգամ եւս Սասունը կարողացավ փրկել իր լեռներում ծվարած մի քանի գյուղեր: Շատ հարուստ քրդեր պաշտպանեցին հայերին ֆիզիկական բնաջնջումից՝ իրենցից կախման մեջ դցելով նրանց: 1935 թ. սկսվեցին թուրք-քրդական կռիվները: Երկու արնախում դազանները ընդհարվեցին՝ հայի հողի համար, եւ արնաքամ եղած, մահից մազապուրծ եղած հայը նորից թողեց իր հայրենիքը: Մի քանի տարի Բշերիկում ապրելուց հետո, դաղթականի ցուպը ձեռներն առած, գիշերը՝ փախչելով, ցերկը՝ թաքնվելով, անցան Սուրիա, Ղմշլու եւ վերջապես 1947 թվականին Սովետական Հայաստանը իր դռները բացեց իր զավակների՝ թափառական հայի համար: Հոգու բերկրանք եւ ցնծություն. Սուրիայում գտել էր հորը եւ եղբորը, որի հետ ընտանիքն առած, հորեղբայրներով, քեռիներով բարձրացան սովետական նավը որին միայն օրեր էին բաժանում Հայրենիքից: Սուրիայում գտնվելու տարիներին՝ հայրը՝ Օհան Պողոսյանը[4], մահացել էր, եւ հնարավոր չէր աճյունը բերել եւ միայն հայրական շիրիմից մի պտղունց հողն էր, որը որդին տարիներ հետո տարավ իր հետ դերեզման: Սովետական առաջին քաղաքը Բաթումն էր, այնուհետեւ Մայր Հայաստան: Եւ Հայաստանով մեկ ցրվեց հայ դաղթականը՝ դտնելով մեկն իր եղբորը, մեկը՝ մորը, ով ում կորցրել էր դաղթի ճանապարհին՝ եթե մահը չէր տարել նրանց:

Պապս՝ Զաչան Պողոսյանը[5], իր հարազատներով բնակություն հաստատեց Արագած լեռան լանջերին ծվարած մի փոքրիկ դյուղում՝ Կաթնաղբյուրում: Նավի մեջ ծնվել էր վերջին դուստրը՝ Մարոն, ուներ երեք տղա, իսկ մեծ աղջկան ամուսնացրել էր Սուրիայում, որի ընտանիքն էլ իր հետ էր, մի բազմանդամ ընտանիք, եւ նորից տեղափոխություն՝ այս անդամ վերջինը, վերջին հանդրվան Մասիսների դեմ ծվարած Էջմիածնի շրջանի Ոսկեհատ ավանում. եւ սկսեց ծիլ արձակել հայ անտառից պոկված շիվը՝ փրկված ազգակործան հրդեհից:

---

4 Ունեցել է երեք որդի (Զաչան, Հովսեփ, Հակոբ) եւ երկու դուստր (Արշալույս եւ Մարո) (ծանթ. Տ. Ա. ք. Պ.):

5 Ունեցել է փաս զավակ՝ հինգ տղա եւ հինգ աղջիկ, սակայն մինչեւ Հայաստան գալը երկու տղան եւ երեք աղջիկ մահացել են. ողջ են մնացել որդիներից՝ Սարգիսը, Միասակը եւ Գեորգը, իսկ դուստրերից՝ Փարիշանն ու Մարոն (ծանթ. Տ. Ա. ք. Պ.):

Հայրս՝ Սարգիս Պողոսյանը, մեծ որդին էր: Պատմում են, որ երբ ծնվել է մեծ եղբայրս, պապս արցունքն աչքերին ծոցից հանել է երկու փոքրիկ պարկ, որոնց մեջ հող է եղել, մեկը հայրական շիրիմի, մյուսը՝ հայրենի երկրի, համբուրել է եւ մրմնջացել «հային մեռնել չկա» եւ ի հիշատակ մահացած եղբոր՝ նորածնին կոչել է Հակոբ: Մեկ տարի հետո, երբ այգում գործ անելիս է լինում, հենց տան մեջ ծնվում է երկրորդ թոռը, եւ երբ աչքալույս են տալիս, նետում է բահը, ծունկի գալիս եւ համբուրում է հողը, մրմնջալով՝ «Փա՜ռքդ շատ Սասուն, դու հարություն ես առնում» եւ երկրորդ թոռին անվանում է Հարություն. երկրորդ թոռը ես էի:

Ես յոթ տարեկան էի, թթենին անբաժան էր ինձանից, այն կարծես դարձել էր իմ մակության տարիների ընկերը, որը ժամերով ապաստան էր տալիս ինձ, երբ բարձրանում էի ծառը, պատսպարվում տերեւների ստվերների ներքո, անուշ անում քաղցր թուղթը եւ ունկնդրում ծերունիների զրույցին:

Ես միշտ զարմանում էի, թե ինչո՞ւ նրանք անդամ իրենց հող ու ջրի մասին խոսելիս կամ էլ լռության մեջ հիշելիս խոր հառաչում էին. «Է՜հ, ո՜ւր էինք, ո՜ւր ընկանք»: Իմ մտաշխարհում արդեն դծագրվել էր այն աղոտ պատկերը, որը տեսած աչքը տարիներ հետո հիշելիս սարսափում էր, ես գիտեի, որ Մասիսից այն կողմ կա մի մեծ աշխարհ, որը կոչվում է Արեւմտյան Հայաստան, որ այնտեղ՝ հեռվում, Սասնա լեռների ծերպերում կար մի գյուղ, որ այդ գյուղը գտնվում էր Մարութա սարի լանջին, որ այդ գյուղի մոտ կար մի վանք, որ կոչվում էր Մարութա վանք:

Ես գիտեի, որ այդ գյուղից է սերում իմ տոհմը, որ այդտեղ են ծնվել ու ապրել իմ նախնիները, որ այդ գյուղի կանչն է այժմ իմ երակների մեջ, որը մերթընդմերթ այդպես խռովում էր իմ մանուկ հոգին, երբ լսում էի պապիս հառաչանքը. «Մեր գեղի ջրից ումպ մը խմիմ ու մեռնիմ», եւ այդ ջրի անհագ պապակը նրա արյան մեջից անցել էր իմ երակների մեջ, ես յոթ տարեկան էի, սակայն հառաչում էի այնպես, ասես յոթ եղեռն տեսած ծերունի. «Սասո՜ւն, կարոտ եմ քզի»:

Կեսօրի կիզիչ շոգը հետզհետե դառնում էր անտանելի, ծերունիները վեր կացան, իրենց ասելով՝ «գնանք մի քիչ դինջանանք»: Արեւն ուղղակի կրակ էր թափում երկնքից: Պապս հանդարտ քայլերով ներս մտավ տուն, մի բրդուճ մածնահաց կերավ, դեմքին խաչ արեց եւ ցանկացավ պառկել: Նա գլուխը թեքեց դեպի բարձը՝ ցանկանալով քնել (իմ Դավիթները զրկված էին

քնից, նրանք նիհրում էին ականջները պահած սրբազան կանչին): Պապիս ետեւից ես էլ տուն մտա՝ երազելով ինձ համար անհասանելի ջերմությունը, որին կարոտ էին իմ ծերունի Դավիթները: Բայց ինձ անընդհատ հետաքրքրում էր ինչուների մի հսկայական պարս, եւ ես արագ-արագ դուրս թափեցի գլխումս կուտակված ինչուները. պապ ինչո՞ւ ես քնած ժամանակ հառաչում, պապ ինչո՞ւ ժպտալիս աչքերդ տխուր են, պապ ինչպե՞ս սկսվեց կոտորածը, պապ ինչո՞ւ էին հայերին սպանում, պապ թուրքը ուժե՞ղ է, պապ պատմիր հա՜, պապ խնդրում եմ, եւ այսպիսի բազմաթիվ ու պազմապիսի հարցերով ես շշմեցրել էի պապիս, իսկ նա լսում էր թախծոտ եւ փաղաքշող հայացքով, հետո գրկեց ինձ, համբուրեց եւ հառաչելով ասաց. «Քնիր, լաո՜, ինչ մենք տեսանք, չըմ ուզի դուք լսիք, քնիր, լաո՜», եւ արցունքոտված աչքերով գլուխը դրեց բարձին, ես անզգույշ կերպով կպել էի դեռ չսպիացած վերքերին, եւ ծերունական հոգին նորից խռովվել էր:

Իրիկնապահին, երբ շոգը կամաց-կամաց մեղմանում էր, ես դուրս եկա տանից, եւ նկատեցի ստվերում պառկած կատվի ձագին, եւ փայտով հարվածեցի, փայտը դեռ չէր դիպել կատվի ձագին, երբ ականջս ցավոտ ոլորվեց, պապս էր, զայրացած բղավեց վրաս «Շան որդի, հորի կզարկիս, հո դու թուրք չես», ես կարկամել էի, չգիտեի ինչ անեի, խռոված հայացքս կախել էի գետնին, մեկ էլ զգացի, որ պապիս գրկում եմ, համբուրում էր ինձ եւ անընդհատ կրկնում. «Լաո՜, հո դու թուրք չես, հորի էդ անմեղ հայվանին կզարկիս»...: Ես հասկացա, որ ամեն մի վատ արարք թույլ տվող նրա աչքին թուրք է, ամեն բռնություն նրա բառերում թուրք է, եւ մինչեւ հիմա, երբ նման բան եմ տեսնում, ուզում եմ գոռալ, բղավել «Հորի կէնիս, հո դու թուրք չես»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍՅԱՆ